ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱԿՑԻԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.05.2014 13:43



ՀՀ փաստաբանների պալատը, Պալատի երիտասարդական խորհրդի և փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնակցությամբ մայիսի 1-ին՝ Աշխատանքի օրվա կապակցությամբ, Հյուսիսային պողոտայում իրականացրել են իրազեկման ակցիա, որի կարգախոսն է ‘պաշտպանված աշխատող, բարեխիղճ գործատու' հզոր հայրենիք’:
ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը աշխատանքի օրվա կապակցությամբ շնորհավորելով աշխատավորներին նշել է.‘**թե՛ հայ աշխատողը և թե՛ գործատուն պետք է իմանան, որ իրենք պաշտպանված են: Կոչ եմ անում պաշտպանել սեփական աշխատանքային իրավունքները’**: Ըստ Արա Զոհրաբյանի աշխատանքային վեճերում դատական նախադեպերը հիմնականում աշխատողի օգտին են:
Երիտասարդ փաստաբանները շուրջ 500 թռուցիկներ են բաժանել քաղաքացիներին և պատասխանել նրանց հուզող հարցերին:
Թռուցիկներում հակիրճ ներկայացվել են իրավունքները և աշխատանքային կարգապահությանը վերաբերող դրույթները.

ԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ.
1.Անվնաս պայմաններում աշխատելու ,
2. Աշխատավարձ ստանալու ամբողջական և ժամանակին (գիշերային, արտաժամյա և հանգստյան օրերին աշխատելու դեպքում ստանալ արտաժամյա հավելավճար),
3. Աշխատանքի ընդմիջման
4. Արձակուրդի
5. Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ ստանալու,

ՄԻ ՄՈՌԱՑԻՐ
1. Ենթարկվել աշխատանքային կարգապահությանը,
2. Ժամանակին աշխատանքի ներկայանալու ,
3. Գործառույթներդ ու գործատուի այլ հանձնարարությունները բարեխիղճ կատարել,
Հարգելի քաղաքացի այսօր ճանաչելով ու պաշտպանելով սեփական իրավունքները՝ բարեխիղճ կատարելով աշխատանքային պարտականությունները' դու կայացնում ես գալիքի Հայաստանը:


ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Նախորդ նորությունը: ՀԱՐՑՈՒՄ LURER.COM ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻՆ

Առաջարկվող նորություններ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

06.11.2013
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

11.11.2013ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

12.11.2013ՍՏԵՂԾՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })